Հումանիտար գիտություններ №-2 (40) 2021 Гуманитарные науки

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

ՄԿՈՅԱՆ Ա. Ա.

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան. Գյումրիի Պարույր Սևակ 4 e-mail- artashesmkoyan01@gmail.com

Հոդվածում առանձնացվել և վերլուծվել են աշխարհայացքի և աշխարահայացքային գիտելիքի ձևավորմանը միտված աշխատանքները բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողների հետ: Աշխարհայացքի տեսական հիմքերի և աշխարհայացքային գիտելիքի ձևավորման մանկավարժական ուղիների ուսումնասիրությունը հանգեցրել է այն եզրակացության, որ ուսումնառության ընթացքում տարբեր առարկաներից ստացած ուսանողների գիտելիքները և ձեռքբերված կարողությունները պետք է ընդհանրացվեն աշխարհայացքի գիտելիքի մակարդակով: Այս ուղղությամբ կատարած փորձարարական աշխատանքները բավարար հիմք կծառայեն մասնագիտական և անձնային կոմպետենտության բարձրացման համար:

Հիմնաբառեր. Աշխարհայացք, աշխարհայացքային գիտելիք, համոզմունք, գործառույթներ,

Ներկայացված է խմբագրություն 15.08.2021 թ

Բարձրագույն մանկավարժական կրթության ոլորտի մասնագետների պատրաստման համակարգում որոշակիորեն պարզաբանվում են սոցիալական արժեքների հետագա ակտիվացման խնդիրները: Մասնագիտական և անձնային զարգացման շրջանակում առաջնահերթ խնդիր է ապագա մանկավարժների աշխարհայացքի, աշխարհայացքային գիտելիքի ձևավորումը հատկապես բուհական ուսումնառության տարիներին՝ հաշվի առնելով օբյեկտիվ և սուբյեկտիվ տարաբնույթ դժվարությունները: Հետևաբար, անհրաժեշտ է ուսանողներին պատկերացում տալ ոչ միայն աշխարհայացքի փիլիսոփայական վերլուծությունների մասին, այլև մշակել մեխանիզմներ աշխարհայացքի և աշխարհայացքային գիտելիքի ձևավորման վերաբերյալ:

Աշխարհայացքի մեթոդաբանությունը մասնագիտական գրականության մեջ արտացոլվում է տարբեր ուղղություններով՝ աշխարհայացքային գիտելիքի կախվածությունն արդի

գիտությունների աստիճանակարգում՝ նրա ինտեգրման և դիֆերենցման պայմաններում[1], աշխարհայացքային գիտելիքի մաթեմատիկականացումը, որպես դրա ինտենսիվ յուրացման օպտիմալ պայման,
համագիտական, միջգիտական և ներգիտական հասկացությունների ձևավորումը որպես մեթոդաբանական պահանջ, մոդելավորումը՝ որպես աշխարհայացքին ձևավորման հիմնական մեթոդ և այլն [2]: Աշխարհայացքի և նրա ձևավորման վերաբերյալ մեթոդաբանական ուղղությունները պահանջում են անպայման հաշվի առնել բուհական գիտությունների ինտեգրացիայի և դիֆերենցիացիայի գործընթացը ուսանողների ուսումնառության ներկա պայմաններում: Պետք է նկատի ունենալ այն կարևոր հանգամանքը, որ գիտությունների մաթեմատիկականացման գործընթացը մեր օրերում ներառում է ո՛չ միայն մաթեմատիկայի ավանդական բնագավառները, այլև մարդկային գործունեության նոր, մինչ այդ մաթեմատիկականանցման համար անհայտ ոլորտներ (մանկավարժություն, հոգեբանություն և այլն): Մեթոդաբանական առումով արժևորվում են համագիտական, միջգիտական և ներգիտական հասկացությունների նորովի իմաստավորումը: Աշխարհայացքի ձևավորման գործընթացում այսօր կիրառվում են ամենատարբեր մեթոդներն ու եղանակները: Օրինակ, մոդելավորումը, որպես աշխարհայացքի ձևավորման կարևոր մեթոդ կարող է կիրառվել աշխարհայացքային տարբեր օբյեկտների միջև ներքին, անտեսանելի կապերի ու հարաբերությունների արձանագրման և ճանաչողության համար: Այսպիսով, կարող ենք ընդհանրացնել, որ վերոնշյալ մեթոդաբանական հիմնական միջոցների ու եղանակների միասնական կիրառումը ապահովում է աշխարհայացքային երևույթների և գործընթացների վերաբերյալ ճշգրիտ և համակարգված տեղեկատվության ստացումը:
Հայտնի է, որ անձի գիտական աշխարհայացքի հաջողությունը մեծապես պայմանավորված է նրա էության, յուրահատուկ գծերի, գործառույթների, կառուցվածքի ճիշտ ըմբռնմամբ: „Աշխարհայացք” եզրույթի իմացության արմատները գնում են դարերի խորքը, բայց այն գիտական շրջանառության մեջ է մտցվել գերմանական դասական փիլիսոփայության կողմից 18-րդ դարի վերջում և 19-րդ դարի սկզբին: Ժամանակակից փիլիսոփայական գրականության մեջ չկա միասնական կարծիք „աշխարհայացք” հասկացության վերաբերյալ: Հետազոտողների մեծ մասը ելնում է նրանից, որ „աշխարհայացքը” որպես գիտակցության յուրահատուկ գործունեություն չի նույնանում հասարակական գիտակցության որևէ այլ ձևի հետ: Ամենից առաջ աշխարհայացքը մարդկային իմացության, ինքնագիտակցության և նպատակադրվածության բարձր ինտեգրումն է: Ըստ Վ. Ի. Շինկարուկի՝ աշխարհայացքը գիտակցության ինքնատիպ կառույց է, գիտակցության և իրականության հոգևոր գործնական յուրացման գործնական մակարդակ, որոնք արտացոլում են անձի պահանջմունքները, նպատակները և իդեալները [3] :
Աշխարհայացքի առարկան առավել ընդհանուր է, այն ներառում է բնությունը և

հասարակությունը, մարդու հարաբերությունները աշխարհի և իր նկատմամբ: Աշխարհայացքի վերոնշյալ յուրահատկությունը նկատի ունենալով՝ կարող ենք տալ այդ կարևոր ֆենոմենի հետևյալ սահմանումը. աշխարհայացքը հայացքների,
գաղափարների, սկզբունքների մի կուռ համակարգ է, որն արտահայտում է նրա սուբյեկտի (անձ, սոցիալական խումբ, հասարակություն) ամբողջական, ինտեգրալ հարաբերությունը աշխարհի և նրանում մարդու տեղի վերաբերյալ:
Մարդկային իմացության կարևորագույն միավորները կատեգորիաներն են, հասկացությունները, առանց որոնց դժվար է պատկերացնել աշխարհի ճանաչողությունը: Այս առումով աշխարհայացքը, որպես իրականության հոգևոր արտացոլման ձև, ունի հարուստ կատեգորիալ ապարատ, հասկացությունների մի համակարգ, որն առայսօր, ցավոք, հատուկ չի ուսումնասիրվել այդ բնագավառի հետազոտողների կողմից, մինչդեռ դրանց իմացությունը, անկասկած, առավել արդյունավետ կդարձնի աշխարհայացքային խնդիրների ուսումնասիրությունը: Բովանդակային առումով աշխարհայացքի կատեգորիաների մեջ են մտնում „աշխարհայացքային գիտակցություն”, „աշխարհայացքային գիտելիքներ”, „հայացքներ”, „համոզմունքներ”, „իդեալներ” և այլն, որոնց ամբողջությունն էլ կազմում է աշխարհայացքի կառուցվածքը [4]: Աշխարհայացքի, որպես իրականության արտացոլման հատուկ ձևի, յուրահատուկ գծերից մեկը նրա ատրիբուտային բնույթն է, որից էլ բխում է աշխարհայացքային գիտակցության համընդհանրության բնույթը:
Քննարկվող հարցի դիտակետից կարևոր նշանակություն է ձեռք բերում գիտական աշխարհայացքի օբյեկտի և առարկայի վերաբերյալ հարցերը: Դրանք բավականաչափ տարողունակ հարցեր են, որոնք տարբեր մեկնաբանություններ են ունեցել տարբեր հետազոտողների կողմից: Ընդունված է այն տեսակետը, համաձայն որի աշխարհայացքի օբյեկտը աշխարհն է ամբողջությամբ վերցրած: Բնականաբար,նկատի է առնվում օբյեկտիվ իրականության այն հատվածը, որ դառնում է մարդկանց պրակտիկ գործունեության և ճանաչողության առարկա:
Գիտական գրականության մեջ շրջանառվում են աշխարհայացքին վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ:
Վ.Ս. Օվչիննիկովը աշխարհայացքը՝ դիտարկում է օբյեկտիվ աշխարհի էական գծերը, հատկությունները, օրենքները, որոնք վերաբերում են ինչպես բնությանը, հասարակությանը, մարդկային գործնեությանը, այնպես էլ սոցիալական միջավայրին [5]: Աշխարհայացքի սուբյեկտի համար առավել կենսական նշանակություն ունեն ո՛չ թե իմացության առօրեական մակարդակում տարերայնորեն ձեռք բերված աշխարհայացքային պատկերացումները, որոնց դերը մարդու կյանքում չպետք է թերագնահատել, այլ այն գիտելիքները, մտապատկերները, հայացքներն ու սկզբունքները, որոնք, յուրացվելով անձի կողմից, բարձրանում են տեսության մակարդակին և դառնում նրա համար հուսալի

աշխարհայացքային կողմնորոշիչներ:
Աշխարհայացքի և աշխարհայացքային գիտելիքի ձևավորումը մանկավարժության տեսության և պատմության, մասնավոր մեթոդիկաների առաջնահերթ խնդիրն է, քանի որ ժամանակակից մանկավարժը իր դասավանդած առարկային զուգընթաց, աստիճանաբար, ձևավորում է մատաղ սերնդի
աշխարհայացքը, համընդհանուր պատկերացումները, հասարակության, բնության, մարդկանց համընդհանուր պատկերացումների, տարբեր երևույթների վերլուծության և մեկնաբանության վերաբերյալ [6]: Փիլիսոփայությունը ուսանողների հետ աշխատանքում առավելապես քննարկում է աշխարհայացքի տեսական հիմքերը, մեթոդաբանությունը և այլն: Իսկ ինչ վերաբերում է աշխարհայացքի և աշխարհայացքային գիտելիքի ձևավորմանը, ապա դա զուտ մանկավարժության խնդիրն է, որն իրագործվում է մանկավարժական գործընթացներում: Դեռ ավելին մանկավարժությունը ևս աշխարհայացքային ուղղվածությամբ է, քանի որ ուղղակիորեն վերաբերվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորմանը և իրականացմանը: Ահա թե ինչու ենք այսչափ ուշադրություն դարձնում աշխարհայացքի ձևավորման էական խնդիրներին՝ հատկապես կրթության բարեփոխումների համատեքստում:
Աշխարհայացքի, աշխարհայացքային գիտելիքի կարևոր առանձնահատկությունները դրսևորում են որոշակի մանկավարժական պայմաններում: Հոգեբանամանկավարժական գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել աշխարհայացքի ձևավոևման մի շարք մանկավարժական պայմաններ: Մեզ ընձեռված հնարավորությունների սահմաններում խիստ համառոտակի կդիտարկենք այն մանկավարժական պայմանները, որոնք առավելագույնս տիպական են աշխարհայացքի և աշխարհայացքային գիտելիքի ձևավորման համար:
Բուհական ուսուցման ընթացքում աշխարհայացքի ձևավորման կարևոր պայմանը ուսուցման գիտատեսական մակարդակն է, դասավանդման ապացուցական գիտականությունը:
Ապացուցումը կապված է իմացության տրամաբանական այնպիսի ձևի հետ, ինչպիսին մտահանգումն է, որն իր մեջ պարունակում է հասկացություններից ու դատողություններից բխող նոր գիտելիքը: Ապացուցումն, ըստ էության, ոչ միայն տրամաբանական դատողություն է, այլև իրենից ներկայացնում է իրերի, առարկաների, գործողությունների հաշվառում՝ եզրակացությունների հիմնավորման նպատակով:
Ուսումնական գործընթացում ապացուցումը կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ ապացուցումը դասախոսի կամ մանկավարժի կողմից, դասախոսի պահանջով ապացուցման վերարտադրությունը ուսանողի կողմից, դասախոսի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ ապացուցման ուղիների որոնումը ուսանողի կողմից և այլն:

Դասախոսի կողմից ապացուցումների օգտագործումը նպաստում է ուսանողների գիտական աշխարհայացքի ձևավորմանը, նրանց տրամաբանական կարողությունների մշակմանը:

Գիտական աշխարհայացքի մյուս կարևոր պայմանը ուսումնադաստիարակչական աշխատանքի աշխարհայացքային ուղղվածությունն է: Դասախոսի առաջին քայլը ուսումնադաստիարակչական աշխատանքի աշխարհայացքային ուղղվածության ճանապարհին ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների գաղափարաաշխարհայացքային ուղղվածության ապահովումն է: Սակայն, գլխավորը ուսումնադաստիարակչական գործընթացն է, որտեղ վճռորոշ դերակատարություն ունի դասախոսը: Նա է ապահովում ուսումնական գործընթացի աշխարհայացքային ուղղվածությունը: Մանկավարժական գործունեության բնույթով պայմանավորված՝ դասախոսը պարտավոր է ապահովել ուսանողների պրոֆեսիոնալ ուսուցումը և դաստիարակությունը, ձևավորել ուսանողի մանկավարժական աշխարհայացքը, սովորեցնել մտածել, վերլուծել ուսումնասիրվող երևույթները, գիտական փաստերը, կարևորել խոսքի մշակույթը, ուսանողին հաճախակի դնել պրոբլեմային իրավիճակի մեջ, ակտիվացնել ուսանողի հետազոտական կարողությունները և այլն:

Ուսանողների գիտական աշխարհայացքի ձևավորման կարևոր պայմանը դասախոսի անձնական օրինակն է, նրա աշխարհայացքային ուղղվածությունը:

Գիտական աշխարհայացքի ոչ պակաս կարևոր պայման է ուսանողների իմացական ակտիվության և ինքնուրույնության ապահովումը:

Առաջին հայացքից ուսուցման պրոցեսը սոսկ ուսանողներին որոշակի գիտելիքներ հաղորդելու գործընթաց է: Ուսուցման բարդ գործընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսանողը առանց ինքնուրույն, ակտիվ, նպատակասլաց աշխատանքի չի կարող ձեռք բերել գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ: Հետևաբար, ճիշտ է այն մանկավարժական մոտեցումը, որ ուսումնական պարապմունքները պետք է կազմակերպել այնպես, որ ուսանողի մեջ ձգտում, սեր, ցանկություն առաջանա, ինքնուրույն գտնել իրեն հուզող հարցերի պատասխանը: Հասկանալի է, որ այդպիսի պայման բուհում կարող է ստեղծվել միայն ուսուցման գործընթացի ակտիվացման պայմաններում՝ մանկավարժական զանազան ուղիներով ու միջոցներով:

Մանկավարժական հետազոտական աշխատանքի արդյունքները թույլ են տալիս առանձնացնել ուսուցման գործընթացի ակտիվացման մի քանի կարևոր պայման: Դրանք են՝ ուսուցման սկզբունքների և կանոնների ստեղծագործական կիրառում, պրոբլեմային ուսուցման կազմակերպում, ուսուցման, դաստիարակության և զարգացման ապահովում, դասախոսի ստեղծագործական ակտիվությունը, ուսանողների ուսումնական և գիտահետազոտական աշխատանքի խթանումը և այլն:

Ուսանողների գիտական աշխարհայացքի ձևավորմանը մեծապես նպաստում է ներգիտական և միջգիտական կապերի ստեղծումը:
Բուհում ուսումնասիրվող առարկաները խիստ բաժանված չեն իրարից: Նրանք բազմաթիվ տեսանելի և անտեսանելի թելերով կապված են իրար հետ: Ուսումնական տարբեր առարկաների միջև եղած կապերի բացահայտումը նպաստում է օբյեկտիվ իրականության վերաբերյալ ընդհանրական կապերի ձևավորմանը: Այդ իմացական գործընթացը միևնույն ժամանակ ապահովում է ուսանողների աշխարհայացքային
պատկերացումների, համոզմունքների, հայացքների գաղափարների միավորումը ուսանողի գիտակցության մեջ:
Ուսանողների աշխարհայացքի ձևավորման գործընթացում պետք է արժևորել նաև տրամաբանականի և հուզականի միասնության ապահովումը ուսումնադաստիարակչական աշխատանքների բոլոր օղակներում: Մարդը առարկայական աշխարհում իրեն հաստատում է ո՛չ միայն մտքերով, բանականությամբ, այլև զգացմունքներով, հույզերով: Աշխարհայացքում հույզերն ու բանականությունը կազմում են մեկ ամբողջական միասնություն: Տեղեկատվության անընդհատ հուզական ներգործության ստեղծումը անհրաժեշտ պայման է մտածողական ակտիվ գործունեության համար: Հետևաբար, հույզերի դերը մարդկային գործունեության բոլոր ոլորտներում, այդ թվում, ուսուցման գործընթացում, չափազանց կարևոր է: Ուստի, դրական հույզերի առաջացումը կարևոր պայման է ուսումնական տեղեկատվության ընկալման և ամրապնդման համար: Մանկավարժական պայմանները գտնվում են փոխադարձ կապի և միասնության մեջ: Դրանց համալիր կիրառումը անձի գիտական աշխարհայացքի ձևավորման անհրաժեշտ պայմանն է:
Աշխարհայացքի ձևավորման յուրահատկությունը որոշվում է նաև նրա կատարած գործառույթներով, հետևաբար, անհրաժեշտություն կա անդրադառնալ այդ կարևոր հարցին: Խնդրո առարկայի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ: Փաստենք, որ աշխարհայացքի գործառույթները որոշելիս հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ այն իր մեջ ներառում է աշխարհի էության, նրա զարգացման օրենքների և այդ աշխարհի նկատմամբ մարդու հարաբերությունների վերաբերյալ գիտելիքները: Մեր կարծիքով, գիտական աշխարհայացքի գործառույթները ամենից առաջ մարդուն տալիս են աշխարհի էության ընկալման պատկերացումներ մի կողմից, մյուս կողմից բովանդակում են օբյեկտիվ աշխարհի նկատմամբ մարդու ակտիվ, վերափոխիչ հարաբերությունները, այսինքն արտացոլվում է աշխարհայացքի երկու փոխկապակցված և փոխպայմանավորված կողմերը՝ աշխարհըմբռնումը և դրան համապատասխան՝ աշխարհարաբերությունը:
Հոգեբանամանկավարժական գրականության մեջ քննարկում են աշխարհայացքի մի շարք կարևոր գործառույթներ՝ գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական,

գնահատման, մեթոդաբանական, էվրիստիկական (կանխատեսական), ինտեգրալ, կարգավորող, դաստիարակչական, հաղորդակցման և այլն:
Աշխարհայացքի քննարկման շրջանակում անհրաժեշտ է առանձնացնել համոզմունքը, քանի որ ուսանողները առավել հակված են համոզիչ գիտելիքներ և կարողություններ ստանալուն, այլ ոչ թե նյութերի մեխանիկական վերարտադրմանը: Համոզմունքը գիտակցված է և դրա առկայության պարագայում ուսանողները կարող են իրենց գիտելիքները կիրառել գործնական կյանքում, հետևաբար, աշխարհայացքի
ձևավորման գործընթացում հիմնարար նշանակություն ունեն անձի համոզմունքները: Համոզմունքները կազմում են աշխարհայացքի միջուկը քվինթէսենցիան: Հոգեբանամանկավարժական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ „համոզմունք" հասկացությունը տարբեր հետազոտողներ օգտագործում են տարբեր իմաստներով, այդ պատճառով էլ առայսօր չկա նրա վերաբերյալ միասնական կարծիք: Մի դեպքում համոզմունքը համարվում է խոր և հիմնավորված հավատ, մեկ այլ դեպքում՝ անձի կենսական պահանջմունքների համակարգ, երրորդ դեպքում՝ իբրև մարդու հարաբերությունը աշխարհի առարկաների և իրերի, երևույթների ու պրոցեսների նկատմամբ: Նման իրավիճակի հիմնական պատճառն այն է, որ այդ երևույթը դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ մեր գրականության մեջ:
Համոզմունքները գնահատելիս չպետք է մոռանալ դրանց կատարած կարևոր գործառույթները՝ համոզմունքը որպես մարդու սոցիալական ակտիվության ներքին դրդապատճառ, իբրև անձի հայացքների, գաղափարների, աշխարհայացքային կողմնորոշիչների վիճակ և որպես սոցիալական նպատակասլացության կարևոր գիծ: Համոզմունքների բովանդակության մեջ կենտրոնական տեղ են զբաղեցնում անձի հակումները, ցանկությունները, հետաքրքրությունները, ներքին մղումները, դիրքորոշումները, կողմնորոշիչները և այլն:
Համոզմունքներն ու գիտելիքները սերտորեն կապված են իրար հետ, ունեն ընդհանուր կողմեր: Հիմնականն այն է, որ երկուսն էլ օբյեկտիվ աշխարհի սուբյեկտի արտացոլման արտահայտությունն են մարդու գիտակցության մեջ: Գիտելիքների և համոզմունքների ընդհանրությունը հաճախ պատճառ է դառնում նրան, որ ուսումնադաստիարակչական պրակտիկայում, անտեսվում են դրանց առանձնահատկությունները, որի հետևանքով գիտելիքներն ու համոզմունքները նույնացվում են: Դրանց նույնացումը պակաս արդյունավետ է դարձնում սովորողների գիտական աշխարհայացքի ձևացորման աշխատանքը: Գիտելիքը համոզմունք դառնալու հատկություն ունի, սակայն ցանկացած գիտելիք չէ, որ կարող է դառնալ համոզմունք: Համոզմունք է դառնում մարդու ապրումների, հույզերի, զգացմունքների բովով անցնող այն գիտելիքը, որն ընկած է մարդու կենսական դիրքորոշումների, ճակատագրական վճիռների հիմքում: Հետևաբար, համոզմունք դարձող գիտելիքը, իմաստավորվում է սուբյեկտի կողմից, ստանում անձնային իմաստ: Մարդու

էության, կենսափորձի միջով անցնող գիտելիքը բարձրանում է սեփական կարծիքի, գնահատականի մակարդակի: Այսպիսով, գիտելիքը հենց այնպես, միանգամից չի կարող վերածվել համոզմունքի: Դա տեղի է ունենում միայն այն դեպքում, երբ այդ գիտելիքը ստանում է անձնային իմաստ, համապատասխանում է մարդու կենսական պահանջմունքներին ու շահերին, որոնք միջնորդավորված են մարդկային հույզերով և զգացմունքներով: Ուսանողների գիտական աշխարհայացքի ձևավորման գործընթացում պետք է հաշվի առնել նաև համոզմունքի և գիտելիքի փոխադարձ կապը: Չնայած աշխարհայացքը իր բուն էությամբ չափազանց բարդ է, տարողունակ և վերաբերում է բոլոր ուսումնական առարկաներին, այդուհանդերձ ունի իր կոնկրետ չափանիշները, որոնք բնականաբար, հաշվի ենք առել ուսանողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքում: Ինչպես հայտնի է աշխարհայացքի չափանիշների խնդիրը շատ բարդ է: Չխորանալով այդ հարցում՝ այստեղ միայն նշենք, որ մասնագիտական գրականության մեջ լայն տարածում ունի աշխարհայացքի ձևավորվածության երեք հիմնական չափանիշները: Դրանք են՝ աշխարհայացքի սուբյեկտի համոզվածությունը, անձի աշխարհայացքային կողմնորոշումների համակարգը, անձի ակտիվ կենսադիրքը: Աշխարհայացքի և աշխարհայացքային գիտելիքի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները սկսվել են 2017-18 թվականներից՝ բակալավրիատի 1-4 կուրսերում, որոնց մասնակցել են 120 ուսանող: Աշխատանքներն իրականացվել են մի քանի փուլերով: Նախնական փուլում դիտարկվել են աշխարհայացքի էությանը, առանձնահատկություններին, կառուցվածքին, ներգիտական և միջգիտական կապերին վերաբերող հարցեր:

2-րդ փուլում, յուրաքանչյուր մասնագիտությանը համապատասխան ընտրվել են համապատասխան առաջադրանքներ, խնդիրներ, որոնցով փորձել ենք բացահայտել ուսանողների ընդհանուր կողմնորոշումները տվյալ երևույթի հանդեպ, տվյալ երևույթի կապը այլ երևույթների հետ՝ անկախ իրենց ընտրած կոնկրետ մասնագիտությունից, այսինքն պարզաբանել ենք համակարգային գիտելիքի առկայությունը և անհրաժեշտության դեպքում փորձել ենք տարբեր սկզբնաղբյուրների միջոցով համալրել դեռևս լիովին չգիտակցված գիտելիքների պակասը խմբային քննարկումների ընթացքում: 3-րդ փուլում առավելապես կանգ ենք առել աշխարհայացքային գիտելիքի կիրառական կողմի վրա: Նկատի ենք ունեցել, որ ուսանողները մանկավարժական պրակտիկայի ընթացքում համադրում են տեսականը և գործնականը: Երեխաներից ստանում ենք բազում հարցեր, որոնք արտաքնապես թվում է, թե վերաբերում են կոնկրետ առարկային, մինչդեռ քննարկվող հարցը, ըստ էության, աշխարհայացքային է, քանի որ վերաբերում է մարդուն, այն բանին, թե նա ինչպես է մտածում, ինչ մոտեցում ունի տվյալ հարցի պարզաբանմանը, ունի՞ արդյոք այլընտրանքային մոտեցում հարցերը տարբեր կողմերով մեկնաբանելու համար: 4-րդ փուլում, վերջապես, հետաքրքրել է այն հարցը, թե մասնագիտական և անձնային կոմպետենցիաների շրջանակում շրջանավարտն արդեն՝ պատրաստի

մանկավարժը, էական ի՞նչ փոփոխություններ է կրել հասկանալու երևույթների բազմակերպությունը՝ նկատի ունենալով ուսումնադաստիարակչական պրոցեսի բարդությունը, ՀՀ քաղաքացու ձևավորումը: Համառոտ ներկայացնենք աշխարհայացքային գիտելիքի ձևավորման ծրագրի հիմնական բաժինները.

1. Աշխարհայացքի էությունը և առանձնահատկությունները

Ծրագրի այս բաժնում պատկերացում է տրվում աշխարհայացքի հիմնական հասկացությունների մասին: Աշխարհայացքը անձի համակողմանի զարգացման պայման է: Ցույց է տրվում աշխարհայացքի տեղը հասարակական գիտակցության մյուս ձևերի մեջ, նշվում է համալիր մոտեցման էությունը:

2. Աշխարհայացքի հիմնական գործառույթները նոր գիտելիքների ձեռքբերման գործում: Այս բաժնում արտացոլված է աշխարհայացքի հիմնական գործառույթները, դրանց բաժանման սկզբունքները: Տրվում է այդ գործառույթների դերն ու նշանակությունը մանկավարժական գործընթացում:

3. Անձի աշխարհայացքի կառուցվածքը:

Ծրագրի այս բաժնում մատնանշվում են աշխարհայացքի կառուցվածքի իմացաբանական, սոցիոլոգիական և հոգեբանական տեսանկյունները, նրա կառուցվածքային բաղադրատարրերը (գիտելիքներ, հայացքներ, արժեքային կողմնորոշումներ, իդեալներ) և դրանց փոխադարձ կապը: Ցույց է տրվում էկոլոգիական բաղադրիչի հատուկ դերը:

4. Աշխարհայացքի ձևավորման գիտատեսական հիմնավորումը: Ծրագրի այս բաժինը բովանդակում է արդի պայմաններում գիտությունների զարգացման դիֆերենցիացիայի և ինտեգրացիայի էությանն առնչվող հարցերը, պահանջվում է քննարկել „աշխարհի գիտական պատկեր” և „աշխարհի ֆիզիկական պատկեր” հասկացությունների բովանդակությունը, անձի աշխարհայացքում դրանց տեղի և դերի հարցերը, դիտարկել անձի աշխարհայացքի ձևավորման մանկավարժական պայմաններն, ուղիներն ու միջոցները:

5. Հասկացությունների ընդհանուր բնութագիրը և դրանց փոխադարձ կապը: Ծրագրի այս բաժնում տեղ են գտել հասկացության, նրա բովանդակության և ծավալի, հատկանիշներին վերաբերող հարցերը, հասկացության տեսակները, տրվում է ընդհանուր հասկացությունների (ամբողջ-մաս, էություն-երևույթ, պատճառ-հետևանք, բովանդակություն-ձև և այլն) կապերն ու փոխհարաբերությունները:

6. Ծրագիրը ներառում է աշխատանքի կոնկրետ ձևեր ուսումնամեթոդական տեքստերի համար: Ծրագրի այս բաժնում ներառվել են տարբեր մեթոդիկաներ, որոնք ուղղված են տեքստի ըմբռնման, նրա վերլուծությանը՝ բառի ընկալումը տեքստի կազմում, նրա նշանակությունը և իմաստը, առարկայի հատկանիշները, տեքստի ընկալումը և իմաստավորումը, նրանում առաջարկվող օբյեկտների նկարագրությունը: Տրված է նաև կառուցվածքային և տրամաբանական տարրերի կազմավորման պարզաբանումը,

համատեքստի և ենթատեքստի բնութագրումը:

7. Կառուցվածքահամակարգային և կառուցվածքաֆունկցիոնալ վերլուծությունները որպես մեթոդաբանական պահանջներ

Սահմանվում է կառուցվածքահամակարգային և կառուցվածքաֆունկցիոնալ հասկացությունները որպես ընդհանուր մեթոդաբանական մոտեցում: Համակարգի տարրերը և նրանց փոխհարաբերությունը: Կառուցվածքային վերլուծությունը, տվյալ համակարգի մասի հասկացությունը:

Անդրադառնալով աշխարհայացքի և աշխարհայացքային գիտելիքի ձևավորման խնդիրներին, փաստում ենք որ այս ուղղությամբ դեռևս հատուկ աշխատանքներ չեն կատարվում, մինչդեռ ուսանողների հետ տարբեր փորձարարական աշխատանքները վկայում են, որ անկախ մասնագիտությունից լիովին հնարավոր է, տարբեր բնագավառներին վերաբերող գիտելիքների համադրմամբ, ձևավորել ապագա մասնագետների աշխարհայացքային գիտելիքները մինչգիտական քննարկումների արդյունքում[7]: Կարծում ենք, որ նմանատիպ դասընթաց կարելի է ներառել ուսումնական պլաններում, բուհական դասընթացներում, միաժամանակ այդ ուղղությամբ հանձնարարել ռեֆերատներ, կուրսային և ավարտական աշխատանքներ:

Ինչպես վկայում է մեր փորձը, աշխարհայացքի ձևավորման ծրագիրը հաջողությամբ իրականացվում է: Ցանկալի է այն իրականացնել, կիրառել 3-րդ կուրսում, նկատի ունենալով, որ ուսանողներն ունեն արդեն բավարար պատրաստություն փիլիսոփայությունից, մանկավարժությունից և այլն, անցել են մանկավարժական պրակտիկան, բնականաբար, համադրելիության խնդիր ունեն, այսինքն էական քայլ է կատարվում դեպի աշխարհայացքային գիտելիքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Арцишевский Р. А., Мировоззрение: сущность, специфика, развитие, Львов, 1986, с.54-56
2. Կարապետյան Վ., Ուսումնական նյութերի ըմբռնման, ուսուցման և յուրացման առանձնահատկությունները: Դասախոսություններ, Եր., Նաիրի, 2000, էջ 121-129
3. Шинкарук В. И. Мировоззрение и духовная культура. Филос. думка, 1982, №2:
4. Шуртаков К.П., Мировоззренческая подготовка студентов. В. кн: Интенсификация подготовки учителя, Казань, 1984
5. Овчинников В. С. Мировоззрение как явление духовной жизни общества. Л., 1978
6. Мкоян А. А. Вопросы формирования мировоззрения студентов, Ер., Наири, 2001:
7. Մկոյան Ա., Աշխարհայացքի ձևավորման տեսությունը և պրակտիկան, Գյումրի, 2008, 118-120

SUMMARY

A REFERENCE TO THE FORMATION OF THE PROBLEMS OF WORLDVIEW AND ITS KNOWLEDGE DEVELOPMENT

MKOYAN A.A.

Higher pedagogy in the system of training specialists in the field of education, the problems of further activation of social values are somehow clarified. Within the framework of professional and personal development, the formation of worldviews and worldview knowledge of future pedagogues is a priority, especially during the years of higher education, taking into account the various objective and subjective difficulties.. Therefore, it is necessary to give students an idea not only of philosophical analysis of the worldview, but also to develop mechanisms for the development of worldview and worldview knowledge. The formation of worldview and its knowledge is the priority of the theory, history of pedagogy and private methods, as the modern pedagogue, along with the subject teaches, gradually shapes the worldview of the younger generation, general perceptions, nature-friendly understanding, human perception, analysis and interpretation of various phenomena.

The work on the development of worldview and its knowledge started in 2017-18 in 1-4 undergraduate courses, with 120 students participation. In the first stage, issues related to the essence, peculiarities, structure, intra and inter-scientific connections were considered. In the second stage, appropriate tasks were selected for each specialty, problems, with which we tried to identify the general orientations of the students towards the given phenomenon, the connection of the given phenomenon with other phenomena. In the third stage, we have particularly focused on the applied side of worldview knowledge. We mean that during the pedagogical practice of students, they combine theory and practice. In the fourth stage, the question of great interest was how the graduate understands the diversity of phenomena within the framework of professional and personal competencies? Thus, the worldview development program is successfully implemented in the third year.

Key words: world outlook, worldview knowledge, conviction, functions, curriculum.

РЕЗЮМЕ

ОТРАЖЕНИЕ К ЗАДАЧАМ МИРОВОЗЗРЕНИЯ И МИРОВОЗЗРЕНЕЧЕСКИХ ЗНАНИЙ

МКОЯН А.А.

В статье выделены и проанализированы работы, направленные на развитие мировоззренческих, мировоззренческих знаний у студентов 3 курса бакалавриата. Изучение теоретических основ мировоззренческих знаний привело к выводу, что знания, приобретенные студентами по разным предметам в процессе обучения, должны быть обобщены до уровня мировоззренческих знаний. Проделанная экспериментальная работа в этом направлении послужит достаточной базой для повышения профессиональной и личностной компетентности. Ключевые слова. Мировоззрение, мировоззренческие знания, убеждение, функции, учебная программа.

Տպագրության է երաշխավորել հոգ. գիտ. դոկտոր, պրոֆ. Վ.Ս. Կարապետյանը

25.11.2021 թ.